ԱՆՑՈՐԴԸ ԵՒ ԻՐ ՃԱՄԲԱՆ

(ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՅՈՒՇԱՏԵՏՐԻՑ)

Գրեց՝ ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ

ԾՆՈՒՆԴԸ

Օդը ձիւն է: Ձիւնը պայծառ:

Երեկոն դաղել է դաշտը: Դաշտը սարսըռում է:

Արեւը կանգ է առել մի վայրկեան եւ արիւնով լեցուած մեծ աչքով նայում է: Անծայրը ծփում է վարդագոյն շողերի մէջ. իր ծալքերում բոցեր են կայծկլտում:

Հորիզոնը ճարճատում է ծառերի հետ, մագլցում է լեռների վրայ եւ երկնքի կատարին այրուող պատուհաններ բաց անում:

Լեռները ճերմակ են:

Գեղամայ բարձունքները յստակ տարածութեան առջեւ վեր են բարձրացրել իրենց բիւրեղեայ գլխարկները: Արաքածի շրթունքների վրայ նուռ է պայթել:

Խոր անդորրութիւնը, ճերմակ փիղերի կարաւանի նման, երերալով անցնում է: Կոպերիս տակ Արարատը լոյսի արցունքներ է թափում:

Զանգակների զողանջը հրաշող է: Անտեսանելի թեւերի սաւառնումի հետ մթնոլորտը դեղեւում է, եւ ձիւնը հնչում է մետաղի ձայնով:

Այնտեղ, հեռում, Հռիփսիմէի եկեղեցին, դարերի միջից իր հոգու ելեքտրական լամպը ցոլացնում է հրեշտակների վրայ:

Օդից կախուած տրապեզի վրայ թեւաւոր ոգիներ մարդանքներ են անում: Դաշտի մէջ ընկածները աղամանդ են դառնում եւ շողերի մէջ թաւալւում:

Զանգակների ձայնը կանանչ է:

Շինականները խումբ-խումբ անցնում են. մելանի արատները շարժւում են դողդողացող էջերի վրայ:

Ուրիշ զողանջներ պատասխանում են: Կարմիր ճառագայթները թաւալւում են ձայների մէջ, վայր ընկնում ձիւնի վրայ եւ ծակծրկում օդը:

Ծնունդ է:

* * *

Խրճիթի սեմին առջեւ էշը մրսում է. իր թաւշեայ աչքերը մեզ անծանօթ տեսիլքներ են դիտում եւ վերջալոյսի առջեւ կանգ առնում:

Կովերը պառկած են ոսկէ յարդի վրայ: Մեծ ուշադրութեամբ ականջ են դնում տարածութիւններին եւ ինչ որ բան ասում անցնող լռութիւններին:

Երեխաները, դոյնդոյն գուլպաներ հագած, քայլում են մեծերի ետեւից, եւ ուրախութիւնը ոստոստում է իրենց սրտերի մէջ, ինչպէս ճնճղուկը կանանչ խոտի վրայ: Նրանք տալիս են իրենց ձեռքերը անհունին եւ քայլում են մի քիչ դինովցած, որովհետեւ տօն է:

Ցուրտ է:

Քամին, ձիւնէ մատերով, մէկ առ մէկ, դարձնում է կարմիրով եւ ոսկիով զարդարուած էջեր:

Զանգակները երգում են ուղեղների մէջ, եւ Աստուած երակների մէջ եռացող մեղմ տենդ է:

* * *

Բոլոր ճանապարհները մտածում են:

Փողոցների ցեխերում լոյսեր են լճացել: Մարդիկ կողպում են դռները, բարեւ են տալիս մէկ մէկի եւ գնում են եկեղեցի, այնպէս, ինչպէս ծովային մարդիկ գնում են դիմադրելու հեռուներից եկած առագաստանաւերը:

Քաղաքներում, շուկաները խենթացած վեթակներ են: Կասպից ծովից ճերմակ ձուկ են բերել, Սեւանից՝ իշխան եւ գեղարքունի: Հաւ, չիր, պտուղներ բլուրներ են կազմել եւ վաճառականները բարձր ձայնով պոռում են գները:

Խուժանի տղաները հնդկահաւերին մատով

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան